ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/158

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 29.10.2018թ. թիվ 01.1/26-3/19762-18 գրությամբ «Արման Ասմանգուլյան» Ա/Ձ-ին /ՀՎՀՀ՝ 30923517/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ բնապահպանության նախարարարության 24.10.2018թ. թիվ 5/06.2/52144-18 գրության հիման վրա, 29.10.2018թ. նախաձեռնել է «Արման Ասմանգուլյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Ա/Ձ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. <u>ՀՀ բնապահպանության նախարարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ բնապահպանության նախարարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 24.10.2018թ. թիվ 5/06.2/52144-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 45-րդ կետը՝ ներկայացնում եմ «Ա/Ձ «Արման Ասմանգուլյան»-ի (ՀՎՀՀ՝ 30923517, էլեկտրոնային փոստ՝ armana6@mail.ru, տնօրեն՝ Արման Ասմանգուլյան) տվյալները: Վերջինս բնապահպանության նախարարության կողմից «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/43» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման արդյունքում հայտարարվել է ընտրված մասնակից և ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Ռոման Զոբանյանը:

3. <u>«Արման Ասմանգուլյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը դիմել է «Արման Ասմանգուլյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.10.2018թ. թիվ 5/06.2/52144-18 գրությամբ Բողոքներ քննող անձի մոտ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ա/Ձ-ի գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ-ն պատշաճ ծանուցված է եղել Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/158 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.10.2018թ. թիվ 5/06.2/52144-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ բնապահպանության նախարարարության 24.10.2018թ. թիվ 5/06.2/52144-18 գրությունը, «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/43» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/43» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 27.09.2018թ. նիստի թիվ 3, 28.09.2018թ. նիստի թիվ 4, 02.10.2018թ. նիստի թիվ 5, 02.10.2018թ. նիստի թիվ 6, 08.10.2018թ. նիստի թիվ 7 և 10.10.2018թ. նիստի թիվ 8 արձանագրությունները, «Արման Ասմանգուլյան» Ա/Ձ-ի ներկայացրած հայտը.

ՀՀ բնապահպանության նախարարարության կարիքների համար Գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի գնման նպատակով մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով կազմակերպված «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) հայտ է ներկայացրել «Արման Ասմանգուլյան» Ա/Ձ-ն՝ Ընթացակարգի 1, 5, 6 և 16 չափաբաժինների մասով:

Ա/Ձ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/43» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովի 28.09.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությանը կից աղյուսակի համաձայն՝ Ընթացակարգի շրջանակներում «Արման Ասմանգուլյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները կազմել են՝ 1-ին չափաբաժնի մասով՝ 252.000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), 5-րդ չափաբաժնի մասով՝ 18.000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), 6-րդ

չափաբաժնի մասով՝ 76.320 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), և 16-րդ չափաբաժնի մասով՝ 144.000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է Ընթացակարգի 16-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Արման Ասմանգուլյան» Ա/Ձ-ին:

08.10.2018թ. նիստի թիվ 7 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով Հանձնաժողովն արձանագրել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ուղարկվել «Արման Ասմանգուլյան» Ա/Ձ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 05.10.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Արման Ասմանգուլյան» Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 24.09.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 59.000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Նույն արձանագրության 1.1.2 կետով Հանձնաժողովն արձանագրել է «Արման Ասմանգուլյան» Ա/Ձ-ի 24.09.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ՀՀ պետական բյուջեի նկատմամբ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ ժամկետանց հարկային պարտավորության առկայության փաստը:

Հանձնաժողովը 10.10.2018թ. նիստի թիվ 8 արձանագրությամբ արձանագրել է, որ Ա/Ձ-ի կողմից Հնաձնաժողովին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված գրավոր տեղեկատվություն կամ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվություն չի ներկայացվել:

Նույն արձանագրության 3.1 կետով Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ որոշել է մերժել «Արման Ասմանգուլյան» Ա/Ձ-ի հայտը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

• 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

ՀՀ բնապահպանության նախարարարության կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի գնման նպատակով կազմակերպված «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/43» ծածկագրով գնանշման հարցման հրավերի՝

• 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի Հավելված №8-ով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 7.15 կետի համաձայն՝ Կոմիտեն սույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամա¬դրում է հարցման մասին սույն հրավերի Հավելված №9-ով նախատեսված ձևին համապատասխան

տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 7.15 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Նույն հրավերի 7.15-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում նույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Արման Ասմանգուլյան» Ա/Ձ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա՝ 24.09.2018թ., դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն՝ 59.000 ՀՀ դրամի չափով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Արման Ասմանգուլյան» Ա/Ձ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարելով և հավաստելով, որ բավարարում է «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/43» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, նեկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, ինչը Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ համարվում է գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է «Արման Ասմանգուլյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.10.2018թ. թիվ 01.1/26-3/19762-18 գրությամբ «Արման Ասմանգուլյան» Ա/Ձ-ին /ՀՎՀՀ՝ 30923517/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Արման Ասմանգուլյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ